

լից Լազարէթէն 15 շոկա. թուականաւ գրած նամակն ընդունած է:

Այնուհետեւ Նուբարինեան Յովհ. Ա. ին հետ մեկնեցաւ Մարսիլիայէ, եկաւ Անթիպ (Antibes), անկէ Գենուա (Genova) եւ Բիզա եւ վերջապէս Լիվոնոյ, ուր հասաւ 18 Գեկա. 1772ին, հայ կաթողիկոսայ եկեղեցին իջեւանեցաւ, եւ տեղւոյն հայ հասարակութենէն մեծ ընդունելութիւն գտաւ:

Սարգիս Արքեպ. Ս. Ծննդեան օրերն անցընելէն ետեւ՝ կ'ուզէր Հռոմ՝ երթալ հաստատուիլ եւ հոն մեռնիլ: Բայց քանի մ'օր ետքը երեւան ելաւ իր մէկ հին հիւանդութիւնը՝ ուղեւորութեան դժուարութիւններուն հետեւանօք: Այս հիւանդութիւնը թէպէտ քիչ մ'ետքն անցաւ՝ սակայն յետոյ վերստին սաստկացաւ:

Նշն միջոցին ինքը Հռոմ՝ երթալու նախապատրաստութիւնները կը տեսներ:

Լիվոնոյի Գիւանատան բազմաթիւ նամակներու մէջէն այս մասին հետեւեալ տեղեկութիւնները քաղեցի:

Գէորգ Ա. 30 Գեկա. 1772ին կը գրէ Սարգսի, թէ 16 շոկա. թուականաւ Մարսիլիայէն գրած նամակին համեմատ՝ իրեն յարմար տուն մը պիտի վարձէ. եւ 10 Մարտ 1773ին դարձեալ որպիսութիւնը հարցընելով՝ կ'ապահովցընէ, որ զինք ի Հռոմ ըստ արժանոյն ընդունելու համար պէտք եղածները կը կարգադրէ: Արդէն ինքը Սարգիս Ա. Պոլսէն հետը բերած էր Գաղղիոյ եւ Նէապոլսոյ պետականե-